ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ե 40/-6699
«15» 12 2023թ.

ՀՀ, ք.Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+374 60) 37-77-37, Հեռ.՝ (+374 10) 44-34-80
Հեռ.՝ (+374 60) 37-26-56, Հեռ.՝ (+374 10) 44-29-04

«ԳԼՈԲՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
ՌՈՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ,
«ՎԱԼ-ԿԱՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
ՖՐԱՆԳԵԼ ԳՅՈՒՐԱՄԻՐՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի պարոններ Մարտիրոսյան և Գյուրամիրյան,

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության և «Գլոբուս Շին» ՍՊԸ-ի, որը համատեղության կարգով գործում է «ՎԱԼ-ԿԱՐ» ՍՊԸ-ի հետ, միջև 24.07.2023թ.-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առանց ֆինանսական միջոցների նախատեսման, կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/7» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի և վարչական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման վերաբերյալ, որի ընդհանուր գումարը կազմում է 60.799.200 (վաթսուն միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 02-ի N 1889-Ն որոշմամբ՝ վերանշյալ շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ամբողջությամբ նախատեսվել են, ուստի 24.11.2023թ.-ին, ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայությունը

ծանուցում է ներկայացրել «Գլոբուս Շին» ՍՊԸ-ին համապատասխան համաձայնագիր կնքելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացրել էր N1 համաձայնագրի նախագիծը:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/7» ծածկագրով պայմանագրի 8.15 կետով սահմանված ժամկետում՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, որը լրացել է 15.12.2023թ.-ին, «Գլոբուս Շին» ՍՊԸ-ն, տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինելու նպատակով՝ ներկայացնել է որակավորման և պայմանագրի նոր ապահովումները՝ բանկային երաշխիքի ձևով, սակայն չի կնքել, ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից կազմված, N1 համաձայնագրի նախագիծը և ներկայացրել է իր կողմից կնքված այլ բովադակության համաձայնագիր, որը չի ընդունվել ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 08.12.2023թ.-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը համապատասխան գրությամբ դիմել է «Գլոբուս Շին» ՍՊԸ-ին և նորից զգուշացրել է N1 համաձայնագրի կնքման վերաբերյալ, սակայն «Գլոբուս Շին» ՍՊԸ-ն հրաժարվել է կնքել ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից կազմված N1 համաձայնագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այսուհետև՝ Կարգ) 33-րդ կետի, 12-րդ ենթակետը և Պայմանագրի 8.15 կետն, ըստ որի «Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է», «Գլոբուս Շին» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, ղեկավարվելով գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերով, միակողմանի, հրաժարվում է կնքված պայմանագրից, հետևաբար՝ **2023թ.-ի դեկտեմբերի 15-ին ժամը 18:00-ի դրությամբ միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարաողական ծառայության և «Գլոբուս Շին» ՍՊԸ-ի միջև 24.07.2023թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/7» ծածկագրով պայմանագիրը՝ 60.799.200 (վաթսուն միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով,** ինչպես նաև պատշաճ ծանուցումն

ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «Գլոբուս Շին» ՍՊԸ-ն, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե սահմանված ժամկետում չի վճարել հայտի ապահովման գումարը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/7» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով, «Գլոբուս Շին» ՍՊԸ-ն, ներկայացրել է 3.211.870 (երեք միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամի չափով, հայտի ապահովում՝ N 11364 վճարման հանձնարարականի տեսքով, ուստի հայտի ապահովման գումարը կարող է համարվել վճարված և տվյալ դեպքում՝ «Գլոբուս Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց չի իրականացվի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԿԱՄՈ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ